


մանի ասպետները» ուխտը: Նա միակ տէրն էր նաև Սրբավայրի գրոջակին — սպիտակ գաշտի վրայ հինգ թաջ բոցավառ դոյնով — որ որոշ իրաւունքներ էր տալիս բոլոր նրանց, որոնք արտօնուած էին կիրարկելու, ինչպէս առաջատանաւերին, նաւաստիներին, նոյն իսկ առեւտրականներին: Փրանկիսկեանները 600 տարի, ի հարկէ ոչ առանց մեծ դժուարութիւններ, կատարեցին այս պատճառանքները: Աւստի երբ 1917ին նրանք՝ յանուն Ս. Գերեզմանի վերոգրեալ պատմական դէպքի կատարողն հանդիսացան, գրաւով մի տեսակ կապ հաստատեցին 1297ին հետացող վերջին թաջակիրները եւ նորեկ քրիստոնեայ գինուորները մէջ:

Բացի դրանից՝ ի յիշատակ այս 600ամեակին՝ Ս. Փրանկիսկեոսի ծննդավայր Ասսիդ քաղաքում մեծ հանդէսներ կատարուեցան, որին մասնակցեցան բոլոր հնօրեայ ասպետները, Հոռոզոսի, Մալթայի եւ Ս. Գերեզմանի եւ թաջակիրական շրջանին պատկանող ամէն կարգի եւ դէպքի ներկայացուցիչներ, այն դարի ձեւով զգեստաւորուած եւ զինաւորուած: Բոլոր այս հաղարարութիւնները եւ իր զուգում եւ նուազում էին, այնպէս ինչպէս հին թաջակիրները եւ այլ կրօնական արարողութիւններ, որոնք յիշեցնում էին ժ.Ա.—ժ.Գ. դարերի պատմական-կրօնական այդ մեծ շքանքը: Լրագիրները լինէին այս հանդէսներէ նկարագրութեամբ¹⁷:

(Շարունակելի:)

ՍԱՐՈՒԽՆ



ՍԻՄԷՈՆ ԳՊՐԻ ԼԵՀՍՏՐՈՅ

ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆ

ՆԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒՂԵՆՈՐՈՒԹԵԱՆ Ի ԼՂՈՎԵ Ի Կ. ՊՈԼԻՍ, Ի ՀՌՈՍ, Ի ՄՈՒՇ ԵՒ ՅԵՐՈՒՍԱԼԵՄ ՅԱՄՍՆ 1608—1610:

(Շարունակութիւն:)

11. ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ՅԵՐՈՒՍԱԼԵՄ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԻՔ

Եւ կացի անդ (ի Կ. Պոլիս) ամ մի, աշխատելով եւ վաստակելով գրադրութեամբ, զի ժողովեցից պաշար սուրբ յերուսաղէմ զնալ, զի եւ անդ էի ուխտ արել: Եւ Ստամբուլ զուր գրագիրն խիստ խիստ լինէր. եւ թէ-

¹⁷ Le Temps, 10 Octobre 1933.

պէտ կարգաւորը շատ են, զրօղ չկայ. զի կարգաւոր այլ արվեստ է եւ գրեւն այլ: Եւ ավին ինձ յով զիրք գրել աշխարհականք եւ կարգաւորը եւ քահանայք: Իսկ ես ջանայի եւ խայրաթ առնէի, եւ տղնէի ցայդ եւ ցերեկ. 10 վուժայի, ճեպէի հանապաղ, զի վաստակեցիմ ճանապարհի խարճ. զի ճեռս զատ չէր մնացել. եւ օրն Մ. Կ. գրամ վաստակէի: Աստուած չէն պահէ Ստամբուլ ժողովուրդն եւ գրահանայս, զի այն ամն ժողովեցի ուխտուն 15 զուուռչ:

ՄԵԿՆՈՒՄՆ

Եւ Փոխման Աստուածածնին՝ բռնէին ուխտաւորն նաւ. եւ ես գնացեալ վարձեցի տեղ մի. եւ պատրաստութիւն ճանիւր եւ զախրայի տեսայ. զի ասին ինձ թէ ցամքով գնան 20 շատ դաժար կ'երթայ եւ խարճ: Եւ զի ամենայն ոք սիրելի ունէր, ազգական կամ հէմ-չէրի, ես դարեւ եւ ոչ զոք բնաւ: Բայց մարդիկ աշխարհին այն աստուածասէրք, երկր-գամք, մարդասէրք եւ օտարասէրք՝ տեսալ 25 զիս արտում եւ տխուր՝ միտիթարէին, սիրտէին, մինչեւ ուսայ եւ ընդելացայ ընդ նոսա:

Եւ մտեալ ի նաւ, ել հողմ բարի եւ տարաւ դեղ իրեք օրն ի Կէլի֊ՊՕԼԻ. զի անդ եօխւամա կ'անեն կէմիքն: Եւ կացար անդ իրեք 30 օր վասն ջրի եւ պարսիմաթի: Եւ անտի հասար ի մեծն ՌՍՏՍՍ, որ է մեծ սկէլէ եւ անտիկ բերթ: Եւ գտար անդ զՍալիլ վաշան² Կ զատրղայցով պատկած, մէջն ճանքէիք: Եւ կացար անդ հինգ օր. զէրայ ահ կայր Փոսան-կին: Եւ այս քաղաքս իրեք անակ բերթ ունէր 35 եւ սրխ խուլայք անտիկ եւ ամուր: Եւ կային այդէք, բուրաստանք եւ դրախտք, խաղող եւ այլ միւրք բազում: Եւ եարուքն Փոսանկի չէք: Եւ երեւ հետ մեղ խարիտանն իրեք զատրղայ: 40

Չոր առեալ զԱստուած օգնութիւն մտար ի համատարած ծովն, որ է կնկէլ. եւ այլ չեւեկեալ մեղ սար կամ ձոր, միայն ծով եւ երկինք: Եւ մեք հինգ կայիօն էար. ամէն կալիօն քան զարպաս մի է, իրեք տակ՝ ամպար, 45 մէջն եւ վերեն. եւ այնչափ ըրգակ մտնու որ վեց ամիս հաղիւ լնուն եւ վեց ամիսն պար-

¹¹ Հէպլի: — 21 կերթա: — 23 մարդք. յաստուածասէրք: — 27 յուսայ: — 37 յամուր:

² Այն է 14 Օդոստոս 1614:
³ Սալիլ վաշան երկրորդ անգամ ծովակալ անուանուած էր 1613ին: Յաջորդ տարին 45 անհատէ բազկացած նուատորմիկով նաւած էր դէպի Մալթա (1614 Յուլիոս-Նոյեմբ.), նուաճելու սպասմամբ Գոյի Սէֆէրն (Տրիպոլիս) եւ զսպելու ծովահէնները: Hammer, Geschichte des Osmanischen Reiches, II, 752:

պեն. եւ թէ էսպապ չի գտնուն՝ այնչափ քէրէտը լնուն եւ քար եւ խոշոր եարուի մարդակ եւ գերանք, դեռ չի լցվիր: Ինն ելքան ունի. ԲՃ, ՃՄ խզմէթքար, կէմիճիք, որն աշ- 50 չիք, որն տէլաք, Փուչիճիք, կալաֆաթցի, աուրկայ, եաղճիք եւ այլն. իրեք տեղ աշխատայ ունի. երեսուն-քառասուն կամարայ, ԺԵ եղ, Մ ոչխար, ճիանք, եւ այլ զախիրայ, ջուր հաղար Փուչի, թող զգինին, քացախն. եւ քանի հարիւր եօլչի: Եւ մին կէմի մի կար, անունն Սըրխ արչին, եւ սէրէնին հաստութիւն երկու խուլած, երկայնութիւնն քսան եւ 60 վեց խուլած եւ ի դուրնն որպէս թարսի է. որ հանապաղ անդ մարդ կու նստի եւ կու հայի կար կէմիքն եւ զգուշացնէ որ պատրաստ կենան:

Եւ օր մի պէքճին ճիչ երարձ եւ աղաղակեց. Մէտէթ, կվալթ. եւ ասէ. Ահա տուշման կու դայ: Եւ եղև մեծ խոտլութիւն. թօրերն լցին, թուֆաքնին խուլածիչ արին, զինեցան, հաղար եղան, խքամաթ խօրմիչ եղև. 75 լայ, գտն ու զուում. եւ ով կարէ պատմել կամ գրել: Չամէնքս յամպարն լցին. զուուն վրանիս կղպեցին. կամէր թէ խեղդել էար յամպարն. եւ բազումք թալցան: Եւ ճէնքչիքն ելեալ ի վրայ յամպարին եարաղ կատարով, սրովք եւ սուսերօք, զեղարգեամբք եւ մըղ- 80 լախով, հարպանով եւ նեա վ աղեղով: Ապա Աստուած մեղ ողորմած եղև, որ քամին մեր յետեանց էր եւ նոցա դէմ. վասն որոյ չկարցան մեղ հասնիլ: Եւ մեք հասար ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒՄ, որ է Սկկնտէր: Եւ մեր ընկեր զատր- 85 դանուն իրեք ի Կիլորոս փախան եւ մին յետին մնաց, զի ծանր էր. զնա առաւ Փոսանկն. հաղար ամասս. մէջն իրեք հայ պարկան կայր: Եւ ելաք յամպարէն ի դուրս, խուրպան կարեցար, չէնլիք արին. թօրեր նեաեցին. Աստու- 90 ծոյ փառք տվին:

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒՄ

Եւ զայս քաղաքս Աղէքսանդր Մակեդոնացին չինեց եւ իւր անունն եղ ի վրայ: Եւ է մեծ քաղաք եւ պարսպաւոր. բայց կէսն ամայի. բոլորն ծով է, մի կողմն միայն ցամաք, ուստի Միլ սուին գնայ: Եւ աստ ըմպեցար ջուրն երրորդ դրախտին. տեսաք եւ զտեղին չի թարգմանչաց ծովեղերքն, որ դեռ նշմարանքն երեւէին սենեկաց: Եւ աստ չորս պալիօղ նստէր: Եւ կայր եկեղեցի մի հոռմի եւ 95

49 մարթաք: — 55 չխանք: — 71 խեղթիլ: — 78 աղէքանդրիայ: — 88 յամպիլ:

խաներ մեծամեծք: Կային Հոռոմք, Սըրէք, 95 Փոսանկք. բայց Հայք ոչ: Կայր քարէ եկեղեցի մի Սալա անուն, յոյժ սքանչելագործ եւ զօրաւոր ծովու վրայ, որ գնա նաւավարքն յօղնութիւն խեղդէին. զոր մտեալ ի ներքս չըջե- 100 ջաք եւ երկրպագեալ ելաք: Եւ անդ առին մէնէ խարած մին մին ոսկի. նաև իրեցանք. բայց հարեղայից չառնուն: Եւ կայր խիստ գէլ եւ փախուկ լօրք անդ եւ բազում յոյժ. 105 հինգ-վեց՝ մէկ փարայ. զոր ի զիրութեան չկարէաք ուտել: Բայց Ֆիլաֆ եփէաք իր մտով: Եւ ազնիւ գինի գտանէր անդ Փոսանկի: Եւ տեսաք ներքև գետինն գետնափորի, խորու եարունի վիմաչն եւ կամարակապ. եւ մէջնք քաղցր ջուր. զի ոչ անձրեւի հոր եւ ոչ ջուր կայ. եւ պութուն քաղքին ներքեն ջուր 110 էր: Անդ տեսաք խուրմայի ծառեր, յոյժ բարձր եւ գեղեցիկ: Եւ սակաւ ջուր մի գետօրէն դայր ի քաղաքն Նեղոս գետէն. եւ ասին թէ Աղէքսանդր թագաւորն երեք դայս ջուրս բազում աշխատանօք ասա: 115

ՃԱՆԱՊԱՐԷ ՅԱՂԵՔՍԱՆԴՐՈՒՄ Ի ԳԱԼԻԻԷ

Եւ աստի սկսաք մտանել ի Փոքր Արարիայ. զի չեննօքս սեւ Հնդկիք, այլ թխամորթ եւ կամէրք. այլ եւ կանայք նոցա մեծանճն:

Եւ մտեալ ի նաւակս, որ ըստ լեզուաց նոցա կոչեն ձէրա, ծովեղերօք ի կէս օրն 120 հասար ի ԲէՇիթ քաղաք, որ էր պէնտէր սկէլէ, յոյժ բարեկի: Եւ աստ տեսաք զցանկալի գետն դրախտին Նիլոս բովանդակ, որ զայլ շատաչամբ եւ մեծամեծ ալեօք եւ մտանէր ի ծովն, որպէս Թունայ Սեւ ծովն: Եւ 125 անդ էր տեսանել զշաչիւն եւ զխոտլութիւն, որ բախէր գետն ընդ ծովն ի մտանէն. զի ոչ թողուր ծովն մտանել ի նա գետին. եւ ասին թէ մեծ Փուրթունայ լինի, յորժամ հողմ հնչէ. եւ ոչ ոք կարէ անցանել, զի լեռնանման կո- 130 հակք գան եւ բախին ընդ միմիանս եւ վերանան զիլին այլքն եւ աւազն բարձրանայ որպէս լեռան եւ ձայնք ջրոց հարկման լսելի լինի աւուր մի ճանապարհ: Եւ մտաք ի ներս քաղցր ջրով: Եւ յառաջ գետին բերթ կայր ամ- 135 բոցի, եւ երկուց կողմանց գետոյն կանաչ դալար եւ խուլմայի ծառեր, զոր ի գնալն հըրճէաք: Եւ մտեալ ի ներս քաղաքին պարսպաւոր, տեսաք որ զիլած էր լեռնանման բակ- 140 լա, ոսպ եւ բրինձ, երեղ կովուց եւ մեղր յուլով: Եւ աստ եւս նստէր պալիօղ Փոսանկու: Կացար անդ օր մի:

122 բարէլի: — 124 շառաջմամբ:

Եւ այլ փոքր ուրիշ աղբ կէմի վարձեցաք . եւ մտեալ ի նա ահաւ եւ դողութեամբ , զի եր-
 145 կեղ կայր վէլահ Արապնուն . զի մտանէին ի կէմին եւ հանէին զմարդիկ : Բայց ինձ բարե խրատ տվին քրիստոնէք , թէ դու պարզամիտ մարդ ես , չլինի թէ նաւի եղերն նստիս , այլ սէրէնին տակն : Զի Արապը նենկաժողք են .
 150 բայց Հոռոմացոց եւ դուժարէ յոյժ երկնչին ոպահոց եւ ենկիչէրոց : Եւ զի հողմն սակաւ էր եւ գեան որընթաց , կապեցին սէրնին գլուխն պարան երկայն . եւ ելեալ նաւավարքն ի ցամաք քարէլին գետեղերօքն : Եւ գային մերկ
 155 Արապնին երկու կողմամբ՝ հաց խնդրէին . եւ Հոռոմցիք թՊաք ձգէին , նոքա փախէին : Եւ իբրեւ երկուց եղեւ թէ՛մպէ՛հ արին՝ զգաստ լինել , զի հարածգատա եւ Արապքն եւ խորամանկ : Պատմէր մի ոմն թէ Մի ննջէք . զի ես
 160 երբեմն երթայի Մըր գետովս այս եւ գլխէի սոցա խորամանկութիւնս . առի դամենայն ինչ զոր ունէի՝ արծթէ թուր , թամբք , երկան եւ զչանթաս . եղի դամենայն ի ներքեւս , զէյէրն ի գլուխս . եւ նեղէի զիս չնիրհել . բայց քունն
 165 յաղթեաց զիս . եւ Արապնին տեսեալ զարծթէ թամբքն , մտեալ ի ջուրն՝ եկին կէմին եւ կամէին առնուլ եւ ոչ կարացին զի մի՛ զարթիցեմ . ապա մինն հնարս իմացաւ , եխած զոտից մեծ բուլթն . իսկ ես ցաւոյն ի վեր վաղեցի . եւ
 170 նոքա առին զթամբքն եւ դնացին : Եւ մինչ նա գայն խօսէր՝ մի ոմն սկսաւ ձշել , վայ եւ եղուկ ասելով . իմացաք որ առին զնա ի ջուրն եւ խեղդեցին . եւ որոնեալ գտին զքէմէրն ի մէջն . զի այն աշխարհն ամէն քամար կու կա-
 175 պեն դրամով . հանին զգրամն եւ զինքն թողին ի վրայ ջրին : Եւ պեղծքն այնպէս լողորդ եւ սաղլուճ են , որ չկայ արարածս նման նոցա . խարապաթախ կու նմանին . զոր եւ աչօք տեսաք ի ցորեկի . մտանէին ի գետն պահ մի կե-
 180 նային եւ այլ տեղ կ'երնէին . եւ թէ մի գրամ ձգես ի գետն՝ մտնուն , գտնան եւ հանեն . եւ զիչերն հետ կէմուն շրջին որպէս ձկներ , եւ դողանան զմարդիկ թէ ննջեն . եւ այլ չկարես տեսնուլ զնա :

185 Իսկ մեք եղերօք երկու օրն հասաք ի հասապա մի եւ սկէլէ՝ ՊՈՒԼԱՔ անուն . որ եւ սա զեղեցիկ Մարայ սքէլէ է . եւ գետն աստի այլ տեղ երթայ : Եւ մեք ելաք նաւէն . վարձեցաք իչվան . զի անտի մինչ Մըր չարեկ միլ է .
 190 եւ ջուր աստի գնայ ի Մըր . եւ ասին խճ ուղտ ջուր կրէ աստի :

146 գմարդիք : — 149 յարապք : — 188 ելալ :

ՄՍՐԸ = ԳԱՀԻՐԸ

Եւ իբրեւ մտաք ի Մըր՝ այնչափ սկսաք
 գնալ , որ պէզորէցաք . երկու ժամն ապա հա-
 սաք Հայոց թաղն . քանզի յոյժ մեծ էր քա-
 դաքն եւ մարդաչատ :
 5 Կայր եկեղեցի մի խոլու . եւ անդ տված էր մատուռ մի Հայոց . եւ վերեւն վերնատուն կանանց . եւ այլ վեր՝ կարգաւորաց տեղիք բնակութեան : Կայր Նիկիտարցի քահանայ մի՝³ եւ Թօղաթցի հարեղայ տէր Մաղաքիայ , որ
 10 մեծ սիրով բնակալաւ եւ ոչ եթող այլ տեղ գնալ , այլ առ նա մնալ : Երկու ամիս կայի անդ . չեթող ինձ փող մի հանել . այլ ինքն դանազան կերակրովք պատվէր զիս . միթէ Տէրն Քրիստոս վարձահատոյց լիցի իւրն միոյն հազարա-
 15 պատիկ արխուր : Բայց ելք աստիճանաց խաւարչտին տեղ էր . միշտ կանթեղ վառէր ցորեկն եւ զիչերն :

Եւ կայր Մըր հայ աւելի քան զի՛ճ տուն ,
 սոմէնն ձէլալոց փախուցեալ :

ԽՊՏԻՔ

Եւ էր մեծ քաղաք որպէս մեծն Հոռոմ . այլ
 20 եւ բազմամբոս . եւ ասին թէ կայ աստ աչՔ- դարով խճ տուն խոլի . ամէնն հարուստ եւ վարթամ . զի անդ էր նոցա քանն որպէս ի Սալանիկ Հրեայք . եւ ամէն խալամ եւ աչՔ-
 25 դար քաղքին նոցա ձեռքն է . վիճաշէն աներ ունին , ապարօջ խոմաշնի ազանին եւ ի փա- շային տիվանն նստին . զի նախնեաց ունին լի- նել տիւանաղպիր եւ աչՔդար թիղապճի : Եւ
 կայ ի մէջ նոցա մարդ , որ ձՈՒ զուրուշի մա- լիք է : Բայց եկեղեցիք նոցա խաւարչտին տե-
 30 դոջ են եւ մթին , հիւթալի մրոտ , մինչ զի եր- կայն սարդիք կախեալ կան փոխանակ կան- թեղաց . եւ փոշին ծածկել է գեղանն եւ զչորս պատն . կարծեմ թէ բնաւ չեն աւել ամել կամ սրբել : Սոցա պատրիարզն Սկէնտէրիա կու
 35 նստի : Կարգ եւ սահմանք , ոչ զարդարանք չունին յեկեղեցիս , զինչ զրեցից . այլ Հրէից աղանդովքն վարին , զի թլիատեն զտղայս բստ Հրէից . եւ երբ լինի Ժ . ԺԲ . ամաց՝ մկրտեն
 40 բստ Արիանոսաց : Եւ յորժամ պատարագ առ- նեն կամ այլ կարգ , քօղ արկանեն գերեսօք եւ

15 յաստիճանաց : — 24 հրէայք : — 26 յազանին : — 29 կա : — 35 պատրիարզն :
³ 1613ին կը յիշուի հոս «Մկրտիչ երէց Տիւրեկեցի», որ Սարգիս զպիր Լեւոնացոյ հետ կը նորոգէ Բերլինի Թ . 57 ձեռագիր Մաշտոցը «ի ժամանակս խոնայ Իպրահիմային եւ Փարմանին, նոցա ձեռնարու- թեամբն եւ կամակցութեամբն»: Հմմտ. Հանդ Ամս . 1932, էջ 454, ծ . 11 :

զգլխովք . եւ հոռմի խօսիւք եղանակեն «քի-
 րէլէգիտն» եւ այլն . եւ փոխանակ ճընձղայի
 չալարաց քշտեն : Այլ եւ կանայք նոցա երգ
 45 ինն յօրինեն՝ շրթունս մատամբ հարկանելով
 եւ ձայն հնչելով . զայս ոչ միայն յեկեղեցիս ,
 այլ եւ ի հարսանիս եւ ամենայն հանդէսս :
 Իրիցնին ունին կանայս . սեւ չուլ հարեղանին
 հազնին . միս բնաւ չունին . եւ ի պահոց ա-
 50 տուրս ձիթով չուտեն , ոչ զինի ըմպեն . աշ- խարհք եւս որպէս Հայք : Կարգաւորքն զնեն
 ի զուլիս սեւ մեծ խավուխնի կամ պոլիթ , բո- լոր դէշա , որպէս ի Լէհ՝ Հրեայք , նոյնպէս եւ
 աշխարհականք . բայց ազօթից եւ այլ առաքի-
 55 նութեանց եւ բարի դործոցն սակաւ հոգան . միայն պահոց եւ անսուազութեան հետեւին : Իսկ իմաստութիւն եւ հանճար ոչ երբեք տեսի
 առ նոսա : Նշխարք բստ Հոռոմոց հաց տան՝⁴ .
 եւ զայն՝ ամենայն ոք եփէ եւ ծախէ : Եւ նոքա
 60 թրիատեն ոչ միայն զարուս , այլ եւ զէզս . եւ թէ զպատճառն այսմ կամ իս իմանալ , ընթեր- ցիր զպատմագիրս , զոր ոչ է պարտ երկրորդել :
 Իսկ աղքատք եւ չքաւորքն ի նոցանէ յոյժ
 սէՖիլ կու կենան , զլիւրաց եւ բոկ . նման
 65 Արապնուն . կապա չունին , բայց միայն հաստ շապիկ եւ կարծ թեղանիքն լայն . կերակուր
 նոցա թէփէ հաց կամ բակլէ . եւ զայն աղբ եւ
 աղբ մօխրովք եւ բանջարովք , որ Քրդու կլլկէ
 հացն լաւ է քան զայն : Եւ պանիրն տկի՝ որդ-
 70 նած եւ հոռոմ բորբոսած , չարքի պէս ուտեն :

ՅԵԼԱՒՔ

Իսկ պեղծ արայ Փէլահնին յոյժ գարչ եւ
 աղտեղի են . զի դամենայն ինչ պեղծ ուտեն՝
 խուրդ , մուկ , օձ , գորտ , կովուց փորէ ան-
 կած սատակեալ հորթն , կատու , աղվես ,
 75 գայլ , խոնտուղ եւ այլ մուրտար , սատակեալ
 եւ հոռեալս . ոչ խորեն բնաւ , այլ ուտեն որ- պէս չուն . իսկ զմուկն աշխանան եփեն , զի
 այն մեծ է առ նոսա : Այլ զմիս ոչխարաց ,
 եղանց լլկեն բստ Հրէից եւ դամենայն երակսն
 հանեն , զոսկրն եւ ջեղսն , միայն մնայ միսն
 80 կտրատեալ որպէս քուֆտա : Այլ եւ աչջիք եւ
 ամենայն արպնին փնթի զպղիբք են , մերկ եւ
 խայտառակ , միայն շապիկով , մարմինքն աղ- տոտ . երեսն եւ ձեռվին անլուայ . պոկտիքն
 մեծ եւ կախ , քթն խըլինք ի վար գայ . եւ
 85 աչվին ճպոտ . ականջաց զեղին թարախ

45 օրինեն : — 48 աղանտովքն : — 53 հրէայք : — 57 երբէք : — 68 քրթու : — 69 բանիրն : — 70 փորիւած :

վազէ . ոտքնուն վրայ կլայ բանջար ցանել ,
 ճնկերն ըզտու . ամէն մարմնով նման դեւին
 Գերգեսացու : Երբ խմոր շաղվէ՝ ձեռքն աչքն
 տանի , երբեմն յարանքն . յղունքն երկայն եւ
 90 սեւ . նոյնպէս թարախք , թէնճէրայք եւ այլ ա- նօթքն շանց եւ խողից լիգելիք : Եւ զայս ա- մենայն տեսալ իմ՝ գարչեցայ յոյժ միջնեւ
 փախեայ . եւ ուխտեցի չուտել ինչ ի ձեռաց
 նոցա :

ՋՈՒՐ ԳԱՂԱՔԻՆ

Եւ օր մի գնացաք ի ժողովակետը ջուրց ,
 որ ի հորս , փողոցս եւ ի ճորս թողուն , յոր-
 ժամ Նեղոս գետն արձակի . եւ հայեցեալ ի
 լիճ մի , յորմէ սախիքն ջուրս կրէին , ոմանք
 լիով , այլք ուսովք . եւ էր ջուրն պղտոր եւ նէ-
 100 վաթ : Հարցի թէ վասն է՞ր . եւ ասին . վասն այն զի ամէն տնէ ջրգնացքն եւ աղբքն
 աստ իջնուն : Եւ տղայքն անդ լողանին . այլ
 եւ ինքեանք փնտի արպնին եւ կանայք նոցա
 անդ լվացվին . եւ լուացքն լուանան : Եւ ասին
 105 թէ դեռ ջուրն այժմ ասատ է , լաւ է . ապա
 երբ նուազի եւ ցամքի՝ այն ժամ սկսանի հո- տիլ . տեսցես թէ ինչե՛ր կ'երնէ ջրոյն , սատ- կած շներ , մարդիկ : Եւ ես ասեմ . Ապա ուստի՞
 ըմպեն . եւ ասեն , թէ Պուլտուխէն , ուղտիւք
 Պուլաքէն . եւ ես միշտ Պուլաքէն բերել տայի ,
 զի մերձ էր :

Եւ հրաչ մի այլ պատմեմ ձեզ . զի այն
 պղտոր ջուրն բերեալ ընուն ի մեծամեծ գուբս
 եւ ի կարասս . եւ լեղի նշով եւ խայսի կորի-
 115 զով շուրթն եւ բորբոն՝ . իսկոյն յլստակի եւ
 պարզ լինի . ապա ըմպեն . ապա թէ ոչ սաֆի
 չամուռ է : Եւ զի յոյժ ջերմ է անդ եւ լիտ .
 զեղեցիկ հոգէ փարչեր կ'երնէ . զնեն զիչերն
 այնպէս ջրով , եւ վաղմէն իմեն պաղպաղ :
 120 Եւ էր մեծ խան մի Թուրքաց , խալիլ խան
 կոչեն . սաֆի Թուրքի մարդիկ են , հայ ու
 տաճիկ . նոքա գարչին Արպուն . եւ անդ իրենք
 կ'երնեն հաց . ունին պաշխա աչջիք , խասաղք ,
 խահլէճիք եւ այլք . քանզի շատ վաճառա-
 125 կանք էին . եւ մեք անտից գնէաք դամենայն
 ինչ , սօմուն , բիթայ եւ այլն , միս , գառն , եղ ,
 եմիչն :

ԽՈՃԱՅ ԻՊՐԱՀԻՄՇԱՅ

Նստի անդ մեծ պէկլիբոյկի . կային եւ
 աղնիւ արվեստաւորք յԱմթայ , Հալպայ , 130

93 գարչեցա : — 100 յիշով : — 103 լողանին : — 109 մարդիք : — 114 գուբս : — 122 մարդիք : — 130 հալպա :

Մտամպօլայ, ոսկերիչք, խլիչիք, դարնիչան-
 ճիք եւ այլ վարպետք: Եւ կայր յԱմթայ խու-
 յումճի պաշի մի խոճայ Իպրասիմչայ անունն⁶,
 յոյժ իմաստուն եւ խելացի, կարդացող եւ
 135 հանճարեղ: Էր նա էրէցփոխան եւ անվանի ի
 դուռն Փաշային եւ ամենայն քաղաքն: Տե-
 սեալ զիս անգամ ի ժամն՝ տարաւ ի տունն. ու-
 նէր վիճաբան փառաւոր տունն: Սա զիս ամէն
 140 օր ի տունն կոչէր եւ միտիթարէր զանազան կե-
 բակրովք եւ խորտիօք եւ անուշ ըմպելօք, զի
 անդ բնաւ չլինի, բայց միայն մօտ պալիօղնին.
 եւ ժամու բաժկի ալ նա կու տար. բայի ալ
 չկայ. թղչն հանեն եւ այն սուղ, օխան մէկ
 145 դուռուչ. զինին ալ ճէրայ մի, որ է օխա, մէկ

220 Բայց Մըր խիստ անմխիթար եւ անշուք,
 անպտուղ, անզինի տեղ է. ոչ այգի, ոչ պար-
 տէղ, ոչ դրախտ ունի. այլ դժոխոց կու
 նմանի. զի Եզրիպտոս դժոխք թարգմանի, որ
 է հրահալոց. ոչ միւրդ, ոչ ծառոց պտուղ ունի.
 225 Բայց միայն ի ծառոց խիժէ աղբ մի պտուղ լինի
 անհամ, ճ մ է գ կոչեն. խիարք ունի փոքր եւ
 անհամ. եւ ճմբուկը անհամ. փոքր սեխ դա-
 տարկամէջ, լի ջրով, անհամ. շաքար խառնեն
 եւ աղա ուտեն. եւ այլ իրք չգտանի, միայն
 230 բակլա, ոսպ, բրինձ, խուրմա, շաքար խա-
 մաշի, մուրտար մեծ մեծ պատինճանք քան
 դճմբուկ, եւ այն անհամ: Անդ միայն եր-
 թաս, երկու-իրեք օր նստիս, էսպապ դնես,
 235 զառնաս ի տունն, փախչիս: Ջուրն եւ հաւան
 լաւ է: Բայց ցաւ մի կայ ախտի մի, որ ա-
 մէնին աչիլին խացակէ կարմիր եւ փառձ,
 240 արանց եւ կանանց, աղայոց եւ աղջկանց: Ցաւ
 մի այլ կայ փոքր աղայոց. ոնց ծնին՝ աղջկին
 որդ ընկնի եւ մեռնին. եւ այնու զաւակ չի
 245 աղբիլ անդ, որպէս Մտամպօլ խիյարուկն:
 Երբորդ զի արանց ճուքն ուռած է եւ այսու-
 ցեալ մեծ քան դճմբուկ. եւ ոչ միայն ոմանց,
 այլ ամենեցուն է ցաւն այն, որ կոչի տ է պ է:
 250 Եւ առին թէ քաղաքս աղ չգտանի. եւ փայտն
 խիստ սուղ է. եւ որ կայ՝ դրամով կու
 ծախվի. վասն այն ի կերակուրն լաքար ձկն,
 որ շուտ եփ կու հասցնէ, աղա գարար է: Իսկ
 աչիլին ի թօղից եւ իշուց չոչն ցաւի. զի անդ
 255 զալապայ է եւ մարդաչառ եւ սըխ, որպէս
 վանատիկ եւ Մտամպօլ Ուզուն չարուն:

292 Հնդի բարակ դաճառաքնի եւ տօլպանտ. զի
 Մըրայ տասն աւուր ճանապարհ է Հնդկաց 175
 սկէլէն, Տիմիաթ կ'ասեն, որպէս Բօրդուկալն.
 Բայց սա լաւ է. զինչ ուղես գտնաս: Եւ ամէն
 օր ան խանն մեծ պաղար է եւ խալապայ, որ-
 պէս պէգէստանն Մտամպօլայ:
 Եւ հուպ նմին խան մի կայ, Խնայխանի 180
 կ'ասեն. զի մէջն սաֆի խնայ է չուլալնով եւ
 աժան: Եւ անտի յառաջ չուկայ մի որ սաֆի
 ապրէմի խումաշ է, եւ ալաճայք եւ Փօղայք.
 զի ապրէում կ'ենէ ատրաֆն, որպէս ի Շամ:
 Եւ անտի հեռու տեղ կայր երկու խան. մինն 185
 ճերմակ թուրք ետարնու եւ մին արապնուն:
 Եւ մտեալ ի ներս՝ տեսաք սեւ հապաշ արապը
 դաս դաս, արք եւ կանայք. որ եւ ի սեւու-
 թենէ նոցա կարծես թէ պատերն սեւ են. էին
 կոյս աղջկունք մերկք եւ խայտառակք, որ ա- 190
 մօթոյքն երեւէին: Բայց սեւն անդ խըյմաթ
 չուէր. միայն ճերմակն. մին ճերմակ տային
 եւ իրեք սեւ առնուին: Եւ այլ խաներն մայ-
 մունտ, ծովու կատու եւ այլ անաւս ճանա-
 վարք ծախէին: Թուրքի ետարնին հագած, 195
 կապած, դօտէվորած. սեւերն մերկ. մէկ սեւ
 աղջիկ կամ կտրիճն կու տան երկու դուռուչ:
 Եւ ելեալ անտի մինչ դնայաք, տեսաք ա-
 ըսալ մի, որ ունէր Ծ. Կ այժ ընդ իւր. եւ կո-
 չէր. «Կապան, լապան», որ է կաթն. զի ուլ 200
 կամէր՝ կթէր եւ տայր. եւ թէ չի հաւնէին,
 բանայր զբերանս նոցա եւ դարձեալ ընդ
 զկաթն:
 Եւ կայր ամէն սօխախի գլուխն ձ. Բձ,
 որպէս Վէնէտիք, փէրէմայք. զի թէ օք կամի 205
 դնալ տեղ մի, տայ հինգ-վեց դրամ, նստի եւ
 երթայ եւ դայ, զի քաղաքն մեծ է եւ չու-
 կայքն հեռու, ոտիւք չի կարէ օք գնալ: Կան
 եւ այլ մեծ մեծ իշվան, որ երկու-իրեք կանա-
 նիք նստին ի վրայ. եւ այլ կան իշվորկիտիք, 210
 որ դրոզս նստուցեալ ի էջ չուրջ աճեն փողոցէ
 փողոց. բայց քաղքցի կանայք ծածկեն դե-
 բաս, նաեւ խպտիքն՝ որպէս Թուրքի աչ-
 խարհն. իսկ զեղայիքն՝ բացերես:
 Եւ կայ ի Մարր ՁՌ ջհտի տուն. եւ են 215
 վարթամ եւ հարուստք եւ Լէհու պէս ամե-
 նայն բան ձեռաց նոցա է, խարաճն, կօբուրք,
 էմէլն, տառապխանան եւ այլն. եւ մեծամեծք
 նոցա տասն-քսան եասախցով չըջին:

141 լինի: — 152 փտելով: — 156 յանց: —
 158 պէգէստան: — 161, 164 մորա: — 168 հալապ:
⁶ Գր յիշուէր 1613ին Բերլինի Թ. 57 ձեռագրին
 մէջ, տես քիչ վերը ծանո. 2:
⁷ Հմմտ. առ այս Գեոր. Մտեփ. Աղոնց, Աշխարհա-
 դրութիւն չորից մասանց աշխարհի. Մասն Բ. Ափրիկէ,
 Վենետիկ 1802, էջ 32:

179 պէգէստան: — 182 չուկա: — 186, 192 ճէր-
 մակ: — 196 դօրէվորաց: — 201 կամէ: — 206 տա:
 — 207 չուքայի: — 211 բողոց: — 215 կա: —
 219 չըջի:

ԲԵՐՔ, ՀԻՆԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ
 220 Բայց Մըր խիստ անմխիթար եւ անշուք,
 անպտուղ, անզինի տեղ է. ոչ այգի, ոչ պար-
 տէղ, ոչ դրախտ ունի. այլ դժոխոց կու
 նմանի. զի Եզրիպտոս դժոխք թարգմանի, որ
 է հրահալոց. ոչ միւրդ, ոչ ծառոց պտուղ ունի.
 225 Բայց միայն ի ծառոց խիժէ աղբ մի պտուղ լինի
 անհամ, ճ մ է գ կոչեն. խիարք ունի փոքր եւ
 անհամ. եւ ճմբուկը անհամ. փոքր սեխ դա-
 տարկամէջ, լի ջրով, անհամ. շաքար խառնեն
 եւ աղա ուտեն. եւ այլ իրք չգտանի, միայն
 230 բակլա, ոսպ, բրինձ, խուրմա, շաքար խա-
 մաշի, մուրտար մեծ մեծ պատինճանք քան
 դճմբուկ, եւ այն անհամ: Անդ միայն եր-
 թաս, երկու-իրեք օր նստիս, էսպապ դնես,
 235 զառնաս ի տունն, փախչիս: Ջուրն եւ հաւան
 լաւ է: Բայց ցաւ մի կայ ախտի մի, որ ա-
 մէնին աչիլին խացակէ կարմիր եւ փառձ,
 240 արանց եւ կանանց, աղայոց եւ աղջկանց: Ցաւ
 մի այլ կայ փոքր աղայոց. ոնց ծնին՝ աղջկին
 որդ ընկնի եւ մեռնին. եւ այնու զաւակ չի
 245 աղբիլ անդ, որպէս Մտամպօլ խիյարուկն:
 Երբորդ զի արանց ճուքն ուռած է եւ այսու-
 ցեալ մեծ քան դճմբուկ. եւ ոչ միայն ոմանց,
 այլ ամենեցուն է ցաւն այն, որ կոչի տ է պ է:
 250 Եւ առին թէ քաղաքս աղ չգտանի. եւ փայտն
 խիստ սուղ է. եւ որ կայ՝ դրամով կու
 ծախվի. վասն այն ի կերակուրն լաքար ձկն,
 որ շուտ եփ կու հասցնէ, աղա գարար է: Իսկ
 աչիլին ի թօղից եւ իշուց չոչն ցաւի. զի անդ
 255 զալապայ է եւ մարդաչառ եւ սըխ, որպէս
 վանատիկ եւ Մտամպօլ Ուզուն չարուն:

ԲԱՐՔ ԵՒ ԿԵՆՅԱՂ ՁԵԼԱԸԱՅ
 Եւ պիղծ Արպին սիրան բայ, դարչելի
 դէմք, պուկտիք կախ, եւ այնպէս լիւրք եւ ա-
 նամօթ են եւ անհարկիք. բնաւ ամօթ չունին
 255 եւ ոչ խորութիւն. մինն արտաքս ելնէ ջրին
 վրայ, միւսն դայ ջուրն, յետ տանի զաղբն եւ
 ըմպէ: Նոյնպէս եւ կանայքն լիւրք եւ անա-
 մօթք. ոչ ամաչեն միմիանց, այլ մերկ եւ խայ-
 տառակ չըջին. նաեւ ի բարանիսն առանց
 260 Փօթի մտնան, այլ բաց. տէլաքնին պանկեց-
 նեն, լուսանան եւ զամօթատեղիսն արանց եւ
 կանանց: Եւ զի փայտ չկայ՝ զիպալ վառեն
 զբուլխանտին, որ լինի ծուխ եւ չար հոտ: Եւ
 265 կան յիշէի զթուրքի համամին եւ զէմիչին եւ
 զամենայն հուզուրնին, այլ եւ զէտէպն, զէր-

238 կա: — 245 տրամով: — 246 ծտխի: —
 256 դա:

քանն եւ դամենայն պարկէշտութիւնս եւ յոգոց
 հանէի. որ եւ խուղ եւ թուք առաջի մարդ-
 կան ոչ արկանեն. իսկ սոքա միղեն, աղբն
 եւ այլ բազում պիղծ եւ զաղբի իրս գործեն,
 270 դոր ոչ արժան համարիմ գրել եւ զունկն ձեր
 յտակ պղծել. զի ամենեւին մուրտար են եւ
 անմաքուր: Եւ դեռ եւս պարծին թէ մեք եմք
 որդիք Մէհմէտի եւ ստոյգ Իսմայելայիք,
 իսկ տաճիկն կէս ու կէս է, խորթ եւ պոռն-
 կորդիք, չեն նոքա Արպի նման. խօսիքարն 275
 ալ աղախնածին է, չէ ստոյգ մուսուլման:
 Այլ եւ միմիանց հակառակ են եւ չեն հաւան.
 Պարսիկ՝ Թուրքի եւ Թուրքն՝ Քրդից. բայց
 Պարսիկքն լաւ համարին, թէ Արբահամու որ-
 դիք են: Թողում գառասպել բարբաջմունս 280
 նոցա. դամք միայն ի տեսութիւն յառաջար-
 կեալ բանին:

ԱՐՔԱՂԱՐ
 Օր մի դնայաք ի յԱթ պաղարն, որ մեծ
 մօյտան էր. անդ անհամար ուղտք, էջք ծա-
 խէին. եւ աժան, զի լաւ ուղտն ժ դուռուչ
 տան, որ ի Շամ կամ Հալապ Լ դուռուչ. այլ
 եւ աղխիւ ձիանք. բայց էջք նոցա ուսուցած է,
 5 զի արագ են եւ վոյթ քան զձի. երբ նստի ա-
 ըսալն ի վերայ եւ զձայնն լսէ՝ թոչի. գոր մեք
 տեսեալ հիանայաք ընդ արաղութիւն նոցա.
 եւ մեք ըխտաւորքն գնեցին Լ, Խ. եւ դար-
 մանէին դնոսա լաւ: Իսկ ես ոչ սիրէի գէշն. 10
 եւ ոչ զգարչելի ձայնն լսել կամէի, եւ ոչ գոչ-
 մէրն: Եւ առին թէ Երուսաղէմայ ճանապարհն
 խիստ աւաղուտ է, տէկմէ էջ չի գլխանար.
 Եթէ գնես խորախ մի, դեռ շահիս. եւ ես
 գնեցի լաւ խորախ մի ԻՆ դուռուչ: Եւ յոր- 15
 ժամ ճանապարհ ելաք, այն արագ իշվան հա-
 զիւ շարժէին, քահալ եւ ծոյլ եղին. եւ որչափ
 աղաղակէին, առաւել մնային. ընդ որ հիա-
 ցաք, ոչ զիտեղով զպատճառն: Եւ առին մեղ
 թէ բազում հիւս ունին. զի ծակտան եւ տան- 20
 ջին (արապք) զիշվանս. այլք զճուս նոցա խա-
 ծատէին. եւ ոմանք հրացեալ երկաթով շան-
 թէին. եւ այն կսկծուն վազէին վեր. իսկ այլոց
 ձեռք անկեալ ոչ երկնէին (էջք). եւ յուրովք
 թողին դնոսա վասն յուրութեան. եւ այլք կէս 25
 զինն տվին. զի այս աւելի հրաշք էր քան Ղայ-
 սարու ներկած իշվանն:
 Կայր ի Մարր մեծ մղկիթ մի եւ բարձր
 միւրաբայ, Եաչիլ մէջլիթ կոչէին, որ էր դե- 30
 դիցիկ եւ վիճաբան. եւ մերձ նմին կայր Իմա-

273 Իսմայելիք: — 278 քրթից:
 6 յարագ: — 8 յարաղութիւն: — յերուսաղէմայ:
 — 25 ուլութիւն:

րաթ, յորս հիւանդը եւ արտաժէտը կային . եւ ի դուրս ով կամէր՝ տային դեղրանք ազգի ազգի՝ աչաց, ալուի եւ գլխացաւի եւ այլոցն, առանց դրամի: Եւ կայր մօյտան մի այլ մեծ՝ քաղքէն դուրս, որ եղինք, կովք եւ ոչխարք ծախէին. բայց եղն մեծ էր քան զգոմէշ. եւ ոչխարն քան զէշ: Այլ եւ տեսաք վեց եղջերաւ եւ չորս (եղջերաւ) ոչխարք. փառք Աստուծոյ:

ԷՍԿԻ ՄՍՐՐ

Օր մի այլ տարաւ զմեզ խոճայ ի պրահսիմ- շան ի էսկի Մսրը. որ մեծ եւ լայնանիստ էր եւ հին աներ դեռ եւս կային. բայց անմարդա- բնակ էր: Կային եկեղեցիք մեծամեծք հոռմի, խրտու. եւ մտեալ յեկեղեցիսն շրջեցաք: Այլ եւ ցուցին մեզ բազում մարմինք ճգնաւորաց, անապատաւորաց ի մէջ սընտկաց, որ երկը- պագեալ ազօթեցաք: Եւ էին եկեղեցիքն քարէ եւ փայտից: Եւ անտի երեւէր Եօթն մարանքն որ է Շրիկիւր Յովսէփի դեղեցիկին, մեծամեծք երկայն եւ բարձր եւ լայն, թրծած քարբլծէ, շէնքն աւեր:

Եւ անտի եկեալ մտաք ի Սարայըն փա- շին, որ էր մեծ, իբրեւ քաղաք էր մեծ. եւ շրջէին ի բակն մեծամեծ տէվէխուշիք, որ է ջայլամ, սղրուս⁸. ոտվին ըղտու, գլուխն փոքր իբր սազի, վիզն երկայն եւ ինքն մեծ քան զուղտ, եւ թեւն թռչոյ. սմայ ասին՝ թռիւր. նա յոտն ցուցանէր. բեռն կամէին բառնալ, նա ասէր՝ թռչուն եմ: Այլ եւ գտանի սա յա- մէն մեծամեծաց զրուսն. եւ հաւկիթն վեց գրամ եւ ութ:

Եւ գազան մի կայ անդ՝ կոկորդիլոս, Լէհ բաղիլէս կ'ասէ, Նեղոս գետեղերօքն լինի յո- լով. չար եւ փնասակար է. յառաջ մարդ չէր կարէր անցանել կամ քաղաքն բնակել: Աղէկսանդր Մակեդոնացին տլիամ է արել, ա- սին, որ սատկեցան եւ այլ չերեւին քաղաքն, բայց թէ հեռու տեղիս: Եւ կաշիք նոցա այն- պէս ամուր եւ պինտ է քան գերկաթ. ոչ սուր, ոչ թփաք, ոչ սլաք չի մտնէ. փան այն զրանց վրայ դարկած է, զոր այլ տեղ երկաթ: Այլ եւ տեսաք գանաղան ձկունս, գազանս, գե- ուունս: Եւ օղի մի ձկան էր կախած սարային դուռն, գրկաչափ հաստութիւնն եւ իրեք խու- լած երկայնութիւն:

Եւ սարայ մի այլ կայր տէֆղերտարին

31 որս: — 43 եկեղեցիսն: — 49 քարբլծէ: — 54 ջայլամ... օղտու: — 73 խուլած:

⁸ Լեհերէն՝ struś, ջայլամ:

մեծ եւ լայնանիստ. անդ եւս շրջեալ զարմա- նալի իրս տեսաք: Եւ Փէլահ Արաբին որպէս ստրուկ եւ գերի էին ի դռներն. եւ ամէն ա- զայի դուռն երկու-իրեք արապ կայր: Եւ Սա- րային առջեւն սարայ մի ալ կայր եւ բազում մէրմէրէ սներ հաստ եւ աղնիւ. վերեւն վրած էր, միայն սներն էր. եւ ասին թէ Փառաւորի սարայն էր սա: Եւ այլ յառաջ սարայ մի այլ կայր, բոլորածեւ մեծ. այժմ մէջլիթ է. զայն կուրծի սօլթանէն առած է. զի Մսրը կուրծին ունէր: Եւ այլ բազում սարայք եւ շէնք եւ եա- բուք տեսաք: Եւ բլրի մի վրայ հոր մի կայր, Գձ մաս ի վայր. ամէն ձ մասին գլուխ եղանք, որ տօլապով ջուր կու հանեն ի վեր. ներքինն միջնոյն, միջինն վերնոյն. եւ այսպիսի դէսնի- Փով յանդնդոց ջուր հանեն տօլապով պաղ եւ անուշ. զի քաղաքն ջրէ զապուն է. եւ ասին թէ երեքհարիւր եղ կայ յայն խզմէթն:

ՄԱԹԱՐԻԱ

Եւ տէր Մաղաբիան տարաւ զիս եւ զամե- նայն ուխտաւորս օր մի ի Մաթարիայ, որ կէս միլ հեռու էր քաղքէն. եւ կայր ի ճանապարհ- հին վանք մի սուրբ Սարգիս. անդ թաղէին զճայ մեռեալք: Եւ ի Մաթարիայ կայր մեծ հաւուղ մի. եւ ջուր ի նմա, տօլապով լցած: Եւ ասին թէ Գրիստոս յորժամ փախեալ Մսրայ՝ յայս գեղս իջաւ. եւ Գրիստոս ջուր խնդրեց, մայրն զնաց խնդրել ջուր եւ ոչ ետուն. եւ սուրբ Աստուածածինն անիծեց, թէ ձեր ջուրն աղու դառնայ. եւ եղեւ այնպէս: Եւ զարձաւ տրտում առ որդին եւ ետես զի յո- տացն Յիսուսի ջուր բխած էր: Փառք Աս- տուծոյ: Եւ է մինչեւ ցայսօր, զի ամէն տեղ եւ դեղն աղի է եւ անդ քայցր ջուր: Եւ այն ջրէն ամէն օր Փաշային տանին, զի այլ ջուր չի խմել: Եւ կայր հաւուղին առջեւն բոլորակ քամար՝ խորանի պէս եւ սէքուք եւ սեղանա- տեղք, ուր խուրպաննիս մորթեցաք, մոմ վա- ուեցաք:

Եւ անտի մտաք ի մեծ պաղչա մի. եւ շրջեալ ի նմա՝ տեսաք բազում ծառս լիմոնի. զի Մսրայ լիմոնն փոքր է, ընկզաչափ, խիստ ջրոտ եւ թըթու. եւ դետինն ամէն անկածն թափել էր՝ կարկառի նման: Տեսաք եւ պալ- սանի ծառերն, ապա չորացել էին. եւ ասին թէ չորս եասախչի պահէին առաջն: Եւ դար- ձաք ի տուն:

87 բլրի: — 101 մարս: — 104 դառնա: — 116 մարայ:

ՂԱՆՈՐԱՅՔ

Եւ այլ օրն եկաք ի սուրբն Մինաս, որ ա- սեն Մինա: Եւ այն մեր եկեղեցի է. զի եւ անդ թաղեն զմեռեալս: Եւ ամէն եկեղեցիքն կան մատուռ կամ սեղան Հայոց. զի ասին եւ մեք գտաք ի պատմադիրս, թէ ԼՈՒ հայի տուն կայր⁹. անտի է մնացել եկեղեցիքն:

Եւ Մսրայ բոլորն կան հոգեւոր եւ մեծ եկեղեցիք եւ մեծանուն վանքեր, զորաւոր եւ սքանչելազործ: Սուրբ Անտոնի վանքն մեծ եւ փառաւոր. եւ կայ հուպ նմին լեռան, ուստի եւ լաքն ելանէ, զոր խառնեն ի կերակուր: Եւ միւս վանքն Մակարայ ճգնաւորի, որ եւ սուրբ մարմինն կայ անդ ի մէջ սընտիկ. եւ կան բա- ջուրմէն կայ անդ ի մէջ սընտիկ. եւ կան քա- յուրմէն հարեղայք ի այնմ վանքերն: Այլ եւ կան որիչ վանքեր սքանչելազործ, զոր մեք ոչ գնացաք, այլ յոմանց հաւատարմաց լսեցաք: Մսրայ Ժ. օրն Սինէական լեռան է, Կարմիր ծովով կ'երթան. բայց յայն կէմիքն բնաւ եր- 140 կաթի բեւեռք չկայ, այլ փայտից. զի ծովն այն խնդմանդ քար կայ / Այլ եւ պօղովատ երկաթն Մսրը առատ է եւ աժան: Եւ շուրջ քաղա- քաւն սափի վանքեր են անապատաւորաց, ճգնաւորաց, որպէս եւ ի զիրս ընթեռնուք, թէ աշխարհն Եղիպտացոց ծաղկեալ է ճգնա- 145 լորօք եւ անապատաւորօք. եւ ամէն սուրբք Մսրայ են. եւ դեռ եւս գտանին. զի Ոստիք զձուձ եւ սեւ զգետտ աղանին, մերկ եւ չքա- 150 եւ կապայ ունին. սակաւ ուտեն եւ ըմպեն. անկողին չունին, այլ ի վերայ գետնի ննջեն. եւ յամենայն վայելչութեանց աշխարհիս հրա- ժարեալ են, կան ճղնութեամբ եւ տքնու- թեամբ միշտ. եւ այս սահմանք է նոցա. վասն 155 որոյ եւ յառաջ ի նոցանէ բազումք լինէին ճղնաւորք:

ԱՐՄԱՆԵՆԻՔ, ՏՈՒՐԻՔ

Եւ որպէս առ մեզ համբաւեն թէ Փլան մարդ հաղար զուռուշ ունի, Փլան երկու հազար. եւ նոքա խուրմայով պարծին, թէ 160 ան արապն հարիւր արմաւենի ծառ ունի եւ միւսն երկու հարիւր եւ կամ իրեք հարիւր. զի բազում շահաւէտ է ծառն. եւ ոչինչ բաց չթո- ղուն. զպտուղն ծախեն, զկորիզն այրեն, եղն

137 ոմանց: — 142 չուրք: — 144 ընթերնուք: — 146 յանապատաւորօք: — 151 յանկողին: — 152 ամենայն: — 160 յարապն:

⁹ Հմմտ. Յայմատուրք Յուլիս 30. «Եւ էր յայն- ժամ (այսինքն յաւուրս Գրիգորի վկայասիրի) յազգէս Հայոց յեկեղեցոս ԼՈՒ տունս համարով. որոց ետ եպիս- կոսոս զքուրբորդին իւր Գրիգորիս անուամբ»:

հանեն, եարբախէն սէրէթ հիւսեն. զկեղեւն ծեծեն զի մզմզուկ է, եւ անտի պարան օյո- 165 բեն՝ բարակ եւ հաստ. իսկ զփայտն ի շի- նուածս տանն, քանդի անփուտ է եւ ամուր. եւ այսպէս ինչ եւ ունի խուրմի ծառն ի պէտք եւ ի շահ է. եւ ինքն է կանաչ եւ անթառամ եւ բարձր. զոր եւ Դաւիթ հիւանայր եւ փա- 170 վաղմամբ զարդարան արմաւենեաց նմանե- ցուցանէր՝ ասելով. Արդարքն որպէս զարմա- ւենիս ծաղկեացին:

Եւ հարցաք թէ զինչ խաղնայ կու տան թաղաւորին. ասին մեզ եթէ ԺԸ տարայայ ձմի 175 շէրիֆի ուղի. եւ զայն իրեք բաժին է արած. զձմի խօնթէրին. զձմի Մսրըխուլին, զձմի Մէքի օրդուլին. զի Մսրայ խուլն եւ Շամայ կ'իջլին. եւ կտրուկ է եւ անուանի. եւ կան աւելի քան զԺԵՌ ամէնն ճինդիք են եւ մզրախ- 180 շիք, լայն եւ երկայն չախչիւր կու հագնին, կարմիր սքառլաթէ:

Եւ մեք վասն այն յամեցաք ի Մսրը, զէրա զժար եւ ահուտ էր ճանապարհն. տէկմա քարվան չերթար յահէն Արապկաց: Եւ ասին 185 մեզ թէ խաղնայ զնայ. զէրա ծովով կու վախէ Յոանկաց, ցամքով զնայ: Եւ մեք ուրախա- ցաք:

ՀԱՆՈՐԱՅՔ ԸՆԾԱՅԱՏԱՐՈՒԹԵԱՆ Ի ՄԵՔԻԷ Այլ եւ ասին մեզ եթէ ի Մսրը իրեք սէլիւր կայ եւ թամաչայ մեծ. որ մեծ շէնլիք եւ սօնանմայք կու լինի. Ա. սոււլքէսէմին. Բ. երբ օրդուն Մէքին տանին. եւ Գ. երբ մուլթասիպն փոխի: Ապա ես զերկուսն միայն 190 տեսի. եւ սոււլքէսիմին միայն չտեսայ: Եւ այնպէս շէնլիք եւ ամբոխ կու լինի յաւուրսն յայն, որ քաղաքն ամէն թոնտո կ'իջնէ. եւ կա- նայք երբ քէպին կարեն, զայն իրեք օրն խա- 195 ւուլ կ'անեն. զի այս իրեք սէլիւրս երթան. զորս ի բազմաց սակաւ մի պատմեցից:

Ատէթ է զի ամէն տարի Մահմատին կու- ոլին վրայ սեւ խառիֆայէ օրդու կու տանին. եւ հինն չէխերուն մնայ: Եւ զայն օրդուն Մսրը պիտի բանի. ամէնն գործած ու սիրմայով 195 նախշած: Եւ ասին, թէ ԲՁ կին կու գործէ, Բ. ԳՈՒ մսխալ սիրմա կ'երթայ. թող զայլ խարճն եւ մարդրոյ շարվածքն: ՈՒՍՈՒ կու հայի մէկ օրդուն. ՈՒՈՒ ոսկի ալ ճանիուն խարճիւ. եւ աղքատ հաճիքն եւ շատ մարդիկ 20 այնով տանին: Եւ երբ կատարի՝ առօք փա-

164 եարբախ: — 167 յանփուտ: — 171 յարմաւե- նեաց: — 178 մարս. շամա: — 180 ճինդիք: — 2 կա: — 4 օրթուն (նաեւ 14, 25): — 7 աւուրսն: — 14 շէնլիք: — 20 մարդիք:

ուր տանին Եւրլ մէջընդէն զնեն: Եւ յետ երկու
 շաբաթու տասն աղին ուղտ մեծ զարդարեն
 եւ վրանին խումաչ ձգեն եւ վրդերն զաֆղայ
 25 ձգեն. զի նոքա օրդուն վերցնեն: Եւ այլ բա-
 զում ուղտք եւ ձիք զարդարեն. եւ աղա մի
 կամ փաշայ դային լինի որ դայն տանի. զի մեծ
 խոզմէթ է այն. եւ վասն այն խոզմէթն պարո-
 նութիւն կամ փաշութիւն կու տան: Եւ աղան
 30 այն զարդարի հեծելազօրօք. այլ եւ քաղաքա-
 ցիքն. եւ վասն առօք փառօք եւ պատվով մե-
 ծաւ, առնուն եւ զնեն ի վերայ տասն ըլտուն.
 եւ որչափ խուլ կայ եւ ծառայ, պիտի ձիաւո-
 րին եւ կազմին որպէս ի պատերազմ: Իսկ
 35 քաղքցիքն եւ ամենայն մերձակայք եւ զեղօ-
 րայք ժողովին, որ մէկ խանութ կամ տուն
 պարապ չի մնար. եւ այնպէս պարուք, եր-
 շով, փողով, տաւուլ զուռնայով առեալ տա-
 նին քաղքէն ի դուրս. եւ սէյրծիքն փողոցաց
 40 երկու կողմանց երեք-երեք տակ սրբութիւն են
 եղել: Իսկ որք մերձ են՝ մեծաւ տենչմամբ եւ
 փափազանօք ձեռօք շօշափեն զըզտերն եւ
 երեսներն շփեն. այլ եւ զօրդուն առնուն եւ
 երեսն քեն. եւ որք ձեռնհաս չեն՝ տան զդաս-
 45 տառակս մօտակային, զի նոքա հպեն ի ուղտան
 եւ օրդուն դարձելի եւ տան նոցա, զոր տանին
 յերեսս շփելով եւ հազար երանի տան ուղտուց
 եւ օրդունին, թէ դուք հպիք Մէհմէտն եւ տես-
 նուք զՄէքէն: Եւ այնպէս ձայն եւ աղազակ
 50 լինի արանց եւ կանանց. եւ անդ է տեսանել
 զլաց եւ զգոչումն անօրինաց: Զի թէ ի հնուսն
 էր տեսանել զփառսս եւ զպատիւ տապանակին
 որոյ կամ յորմամ տանէր Գաւիթ ի տունն
 Արիաթարայ քահանայատեալի, որ եւ առաւել
 55 պատուոյ արժանի էր. բայց սոցա աւելի տե-
 սաք. եւ թէ այն սէրն, հաւատն եւ յոյն,
 զեղջիւն եւ փափազն, զոր ունին, եթէ առ Քրիս-
 տոս էր, երանելի եւս էր: Զոր տեսեալ հիւ-
 ցաք ընդ մեծ սէրն ջերմեանդ, զոր քրիս-
 60 տոնեայք բնաւ չունին դայն սէրն դէմ ճշմար-
 տին Քրիստոսի, որպէս նոքա ի սուս մար-
 դարէն՝ կունան: Եւ թէ որպէս նոքա հա-
 ճիքն, որ ի Մէքէն գնալն որպէս յանձն առ-
 նուն գերկար եւ դժար, անջրդի ճանապարհի
 65 նեղութիւնն, որ քառասուն օր ջուր չկայ,
 պիտոյր բարովք ջուր բառնան յամանս ապա-
 կեղէնս. եւ զի յոյժ շող է, բարում զեկան
 մտինն, մինչ հասանն. յուրով պատահարաց

եւ նեղութեան դիպին. եւ դայն ամենայն առ
 ոչինչ համարին, այլ լալով, ողբով, բոկ
 70 ոտամբք, զկուրծս բախելով եւ անպիտան հա-
 մարելով զանձինս տեսլանս կնոյն: Եւ ա-
 մէն տարի աւելի քան զՍ—ՅՈՒ հողի կ'երթայ
 ի Մեքան. զի իրեք ճանիւղով եւ իրեք պապաթ
 կ'երթան. մինն ծովով, եւ երկուսն ցամա-
 75 ղով. այս է՝ մինն Հայկով, Շամով. մինն
 Մաղրապով. եւ ամէնն պիտի յերուսաղէմ
 պիտի հանդիպին, թէ ոչ խութսուղ հաճի ա-
 սեն: Տեսէք թէ որպէս փառք ու մեծութիւն
 ունի կունան եւ որքան նուէր եւ ընծայ տա-
 80 նին, որպէս ի ժամանակս կուսպաշտից կուց.
 եւ որք անդր հասանն թէ որպէս սէր ջերմ
 ցուցանեն. զհող լիզեն ուր շիրինն է նորա՝ բա-
 զում երկրպագութեամբ եւ երկիւղիւ. զըզ-
 տուց օլօքս համբուրեն եւ աչաց վրայ զնեն,
 85 որոյ վրայ նստեալ է Մահմատ. վասն որոյ եւ
 զամենայն ուղտս պատվեն եւ այլ բարում ա-
 ռասպելս առնեն, զոր աւելորդ համարիմ զրել
 աստ: Երկու շաբաթ մնայ անդ. անտի ա-
 սեալ տանին ի Մաքան:
 90 Ունին եւ փոքր օրտու մի այլ՝ հօրն Աբրա-
 համու, զոր Սայիլ Իպրահիմ ասեն. եւ դայն
 տանին ի գերեզման նորա. մերձ է յերուսա-
 ղէմ. բայց այնմ ոչ այնպէս պատիւ առնեն,
 95 որպէս կրնան:

ՀԱՆԳԵՍՏԻ Ի ՓՈՒՍՄԱՆ ՄՈՒՆԴԱՍՈՒՊԻՆ
 Երկրորդ սէյրն է փոխին Մուխլասի-
 պին. զի այն գիշերն մինչ ի լոյս շէնլիք է, որ-
 պէս ուսմաղին իրիկունն: Ամէն փողոցի մի
 100 զլուս Փէնթ մի եւ թօհվայ մի կայր. եւ ամէն
 տուքանք Փէնթ մի. զահվէխանանին դար-
 դարած եւ տօնաթիւր արած. եւ քաղաքն ա-
 մէն մինչ ի լոյս շըջին եւ թամաշան հային.
 զէրա ազգի ազգի օյունի, սէզնտէրնի, հայա-
 զըջի, եւ այլ կատակ եւ ծաղր, որպէս ի առ-
 105 նանմայքն, եւ ուրախութիւն ոչ սակաւ: Եւ
 ասին թէ ԳՍՈ սակի կ'եննէ այն գիշերն մուխ-
 թասիպին:

ՀԱՆԳԵՍՏԻ ՅՈՒՈՂԱՆԵԼ ՆԵՂՈՍԻ
 Իսկ երրորդն բարի եւ օկտակար, այլ եւ
 վայելուչ եւ պատշաճ, որ է սուվքէսէմին. զի
 ոչ թէ միայն քաղքցիքն կամ ուսմիկքն, այլ
 110 ինքն փաշան իւր ալամաթովն եւ իշխանօքն
 եւ հեծելօքն գայ ի տեղին, ուր գալոց է ջուրն
 գոլելի, ունելով ի պատրաստի ութ զատրղայ
 զարդարած եւ տօնանմիւր եղած: Իսկ կան-
 73 կրթա: — 83 չիրինն] գէշն: — 88 յաւելորդ:
 — 91 օրթու:

23 ուխտ: — 42 գոտերն: — 43 զօրթուն: —
 44 զտասգառակս: — 45 ուղտն: — 55 յաւելի: —
 56 ոյսն: — 59 ջերմեանտ: — 64 յանգրդի: —
 65 չկա:

115 թեղք, ջահք եւ լապտերք այնչափ բազում,
 մինչ զի ծածկեն գերեսս երկնի եւ դաստեղաց:
 Եւ ջուրն սակաւ սակաւ յաւելեալ յորդէ. եւ
 որպէս յեռեալ կաթասլիցն թափէ գետն
 զջուրն ընդ ամենայն երկիրն Երկրպագոց. եւ
 120 այսպէս յաւելեալ ընուն զամենայն հորս եւ
 զձորս. եւ առատացեալ մնան ընդ դաշտօք
 իրրեւ զծով, մինչ զի եւ զըլուրս ծածկեն. եւ
 ապա գան ի տեղին ուր քաղաքն է. եւ բազում
 ամբոխ ժողովեն. եւ ջուրն եկեալ վերացու-
 125 ցանէ գնաւան. եւ յայնժամ լինի ուրախու-
 թիւն մեծ եւ ցնծութիւն մեծատանց եւ աղ-
 քատաց, քաղաքաց եւ զեղօրէից եւ առ հա-
 սարակ ամենայնի: Եւ սկսանին թօփեր,
 թֆաքնի նետել, տաւուլնի, զուռնանի եւ
 130 փողք հարկանի. եւ բոլոր քաղաքն գետովն
 դառնան ի տուն: Եւ մնայ ջուրն այն երկիրն
 վեց ամիս. ապա սկսանի նուազել եւ ցամա-
 քել. մինչ զի ցամաքն երեւի: Եւ երկիր պա-
 րարտացեալ սոյ գալտուղն սերման հարիւ-
 135 բաւոր, վաթսնաւոր եւ երեսնաւոր ըստ ա-
 ռակի Տեառն, եւ այնպէս բազում արդիւնս
 սոյ. զի եւ ընու զամենայն աշխարհս, որպէս
 ասի յառակաց. Եթէ ամենայն աշխարհս սղու-
 թիւն լինի, Մարր յազեցուցանէ. իսկ թէ ի
 140 Մարր սով լինի, ամենայն աշխարհ չկարէ յա-
 զեցուցանել:

ՏՆՏԵՍԱՎԱՆ ՊԱՅՄԱՆՔ ՅԵԼԱՀԱՅ
 Այսպէս բարելի եւ լի եւ առատ է (եր-
 կիրն). բայց բնակիչքն սովալլուկ եւ նոթի,
 աղքատ, սէֆիլ եւ չսլախ, կարօտ եւ հատրաթ
 145 կտոր մի հացի. զի եւ օր մի յազ հաց չուտեն,
 եւ դայն թիփի եւ թանձր հաց. եւ թէ հան-
 դիպի ուրեք կծու, բոլրած եւ յորդանս պա-
 նիր կամ ստակած կով կամ այլ ինչ՝ (ուտեն)
 չաքրի պէս: Եւ ասին թէ սոքա Փարաւոնի
 150 աղք են, որք են ձինկանայ. անէճք կայ ի վե-
 րայ նոցա. աշխատին եւ ոչ վայելեն, սերմա-
 նեն եւ ոչ ինքեանց հնձեն. այլ են բեռնա-
 Վ կիր, ծառայ եւ ստրուկ աղքատ օտարաց: Եւ
 զոր ինչ արարին նոքա ընդ որդիսն Իսրայէլի,
 155 առնեն եւ նոցա այժմ աղք Տաճկաց. զի դամե-
 նայն զոր ինչ վաստակին նոքա եւ ստանան՝
 Տաճիկք յափշտակեն եւ առնուն ի ձեռաց
 նոցա, եւ մնան ունայն: Եւ կայ ի գիրս թէ ի
 Քամայ ցեղէն են. վասն որոյ եւ գանձն նորա
 160 ընկալան. եւ չկայ աշխարհս աղք չար եւ ա-

119 յերկիրն: — 120 աւելեալ: — 124 յամբոխ: —
 136 յարդիւնս: — 138 առակաց: — 142 բարէլի: —
 147 ուրէք: — 150 կա: — 157 ափշտակեն: —
 158 ունայն:

պիրատ, այլ եւ անարդ եւ տկար. զի ոչ թէ
 կերակուր չունին, այլ եւ հանդերձ, վերար-
 կու, գոսակ կամ փօսղալ, տուն կամ բնա-
 կութիւն կամ այլ ինչ փառք. այլ իրրեւ զխոզս
 ի գետնի նստին եւ ելնեն, ուտեն եւ ննջեն,
 165 ի գետնի վրայ ընաւ չունին, այլ ի աղտոտ եւ
 գարալք, դգալ բնաւ չունին, այլ ի աղտոտ եւ
 անխոստ ամանէ ինչ զաղիւր ուտեն ամէն օր,
 եւ բնաւ չըլուանան: Եւ տունք նոցա բոլորեալ
 յեղեգէ եւ ցանկէ՝ որպէս փարալք ոչխա-
 րաց, վերեն բաց եւ ներքեն աւազ, եւ
 170 ինքեանք մերկ. այլք ի ծերպս վիմաց եւ ի
 քաղաթուփս եւ յաւազս բնակեն. բայց զօղու-
 թիւն, հարամութիւն, յափշտակութիւն յա-
 փուց չթողուն. եւ զոր յայլ աշխարհս տա-
 սանորդս տան, նոքա հինգէն մին տան. վասն
 175 որոյ զրկեալ են ամենայն բարեաց՝ հոգոյ եւ
 մարմնոյ եւ ի շնորհաց յՈրդոյն Աստուծոյ:

ՃԱՆԱՊԱՐՀ Ի ԳԱՀԻՐԵՅ ՅԵՐՈՒՍԱԿԵՄ
 Յետ այսր ամենայնի պատրաստեցաւ
 Մարայ խաղնան. եւ խօնաթարէն եկաւ զէր-
 պաղ, խաֆղան եւ հրաման մեծ պարոնի մի,
 որ կոչէր Սուլէյման աղայ: Եւ էր նա սիրելի
 խուրումճիպաշի Իպրահիմ շային. զոր իրրեւ
 5 գիտաց՝ խնդութեամբ գնաց եւ շահաւորեց.
 եւ նա ասաց. Սիրելի իմ, ի՞նչ մուրատ ու-
 նիս այժմ յինչն, ինդրէ՛: Եւ նա ասաց. Ու-
 նիմ աստ եղբորորդի մի, որ կամի Ղուցու-
 չէրիֆն գնալ: Եւ նա ասէ. Ով ուսդա, չէ թէ
 10 մի, ապա տասն ալ թէ լինի՝ քո խաթերն
 համար կ'առնում, հետ տանիմ. բեր գնա առ
 իս, զի տեսեալ ճանաչիցեմ գնա: Եւ օր մի
 տարաւ զիս առ նա. եւ անկեալ յոտան՝ պազի
 զծունկն: Եւ շարք եթէ Դա՞ է քո ասածն. եւ
 15 նա ասէ. Այոյ: Եւ պատվիրեց ինձ զի միշտ
 մերձ շատրի նորա իջնում. այլ եւ հրամեց
 քէհեային, որ զիս լաւ հայի եւ չսոյ զաֆար
 անուլ յինչն:

Եւ իրրեւ եղեւ օրն չուելոյ խաղնին՝ փա-
 20 շան ինքն իւր ազամաթովն եւ հեծելովն մինչ
 ի դուրս միլ մի գաւորեց: Եւ Գձ մարդ ու-
 նէր խաղնան, ամէն պահատուր եւ աղնա-
 ւուր, տօնանմիւր, խուշանմիւր եղած. եւ ութ-
 սուն զօրեղ եւ քաջ մեծ ջորի եւ պէտավի,
 25 ամէնից զլուին խումաչ ձգած, որպէս քար-
 վան պաշի խաթրուն. եւ ամէն մէկ կնիկչէ-
 բու մի յափ տաւ. նոցա վրայ բարձած էր
 խաղնան. եւ զկնի էջքերն երթայր. ապա հուսկ
 30 յետոյ մեք ուխտաւորքս, որ կայաք հարիւր

166 գալէ: — 172 քարաղուրտ:
 14 ոտոն: — 15 դայ: — 18 չսոս: — 21 յիւր: —

հոգի. եւ նախընթաց երթայր օթախն եւ տեղ պատրաստէր. եւ երբ մերձենայր խաղնան օթախն չարեկ միլ մի՝ դարդարէին զջորիքն եւ հարկանէին պողիք եւ նաղարայք, տա-
 35 պլայք, տառուլ գուռնայք եւ ազգի ազգի քնարք եւ երգ. յառաջ խուռմիշ լինէր աղային մեծ եւ փառաւոր շատրըն, թագաւորի լայեխ, եւ անդ տարեալ զնէին զխաղնան. եւ հարիւր մարդ յիբմէ չի գատէր: Եւ ուխտաւորքն հե-
 40 ուռ իջնուին:
 Եւ այն աշխարհն այնպէս սահմանք կայ, որ կօմբուկ չեն ի տալ, թէ եւ ձմի զուռուշի ապրանք ունենայ. զէք զլիսուն ու տալիքն կ'անունն ամէն իրիկուն. կայ որ շահի մի, կայ փարայ, կայ ոռուզ, կէս զուռուշ եւ մէկ զուռուշ ալ կայ. բայց իշուն քիչ է, ըզտուն, ճիւղն աւելի. բայց խաղնին հետ զնացողաց մարդ խատիր չէ խօսիլ: Եւ երբ ես ալ ելայ Մարայ, ասին ինձ շաքար, լիմօն, քացախ առնուլ. զի ջուր չի գտիլի. եւ այն դառն է, հոտած, բորբոսած, պիտի շաքար խառնել, լիմօն, տամն հնդի, ապա կարես ըմպել:
 Իբրեւ զնացար խօնախ մի, զեռ ջուր ու-
 նէաք. եւ երկու օր ու կէսն հասաք ՍԱՂԱՀԱ-
 55 ՏԻՆ. եւ անդ զեռ եւս կայր ջուրն նեղոս զե-
 տոյն՝ ի լիճս եւ ի ձորս: Եւ այս զեղս անթիւ-
 ծառք խուրմայից տեսաք. այլ եւ խուրմա յո-
 լով, աժան. եւ ասին թէ աստի զնայ խուրման ի Մարը, Ստամպուլ եւ այլ տեղ. եւ մեք զնե-
 60 ցաք օխան իրեք դրամի, դաժա եւ պիտրժ-
 տարաք մինչ յերուսաղէմ:
 Եւ անտի մէկ օրն հասաք ի Հիւսիս զեղն, ուստի հինան կ'ընէ, զի սար ու ձոր եւ դաշ-
 տերն ամէն հինայ է, կանաչ եարբախ որպէս
 65 հրէշքայի, եւ ցած՝ նման բանակի. եւ զայն չորացուցեալ աղան. լինի ալիւր. եւ անդ է ստոյգն եւ այլ տեղաց կէսվակէս աւազ է. զի կայ մերձ նմին մանր աւազ որպէս փոշի. զայն խառնեն ընդ նմա զի ծանրացի, վասն
 70 այն սակաւ զօրութիւն ունին: Սորա մէկ տրամ մէկ օխան կ'աժէ. զի աւուր մի ճանապարհէ հոտն կ'առնուս: Գնեցաք օխան իրեքական դրամի. եւ այնպէս հոտով եւ ուժով էր, որ ստանց թանալայ ներկէր զձեռովին:
 Եւ անտի առաջ հատաւ ջուրն դրախտին. այլ ինչ խօնախ իջնուաք, ջուր չի գտնէաք. եւ ուր ուրեք թէ ջուր լինէր, մզլած հոտած. զոր պասքած մարդիկ եւ անասունք անկա-

45 կա: — 46 յիւն: — 48 ելա: — 60 յախորժ: — 61 նախ գրուած զաթի, վրան հիւսս: — 68 կա: — 77 ուրէք: — 78 պասկած մարդիք:

նէին ի վրայ. որ եւ զտիղմն եւս ընդ ջրին հանէին եւ ցամաքեցնէին զհորն. իսկ այլք
 80 յալկիցի փորէին զաւազն, ուստի շող եւ կա-
 նաչ ջուր ելանէր, որ մարդ հայելու չուէր,
 թող թէ ըմպել: Եւ ես զայն տեսեալ յիշէի զքաղցրահամ ջուրն եւ ոգոց հանէի. եւ ան-
 85 յօժար առեալ խառնէի շաքար եւ ըմպէի ա-
 նախորժ: Իսկ յայլ իջեալս յառաջ զնացողքն զդառն ջուրն հատցնէին. զոր եւ դրաստըն մի եւ երկու անգամ փոնչային եւ ոչ ըմպէին,
 այլ ի սաստիկ շողոյն եւ ծարաւման սաստիկ ըմպէին վասն ջերմութեան արեգական:
 90 Աւազն այնպէս խզմիշ եղել էր, որ թէ ձու գնես խորովի. եւ վասն առաւել ջերմութեանն եւ տօթոյն բնաւ չենէ քարվանն ցորեկով, այլ զիշերով. ցորեկն ի բուն տապէաք եւ յետ-
 նացն քսան ժամուն ելնէաք. զի աւազն ներ-
 95 քուստ այրէր զմեղ եւ արեգակն ի վերուստ. եւ թէ ոք ունի քիլիմ կամ չուլ կամ այլ ինչ՝ սփոռէ եւ հանգչի. եւ որք չունին՝ տապին: Այլ եւ ելանեն յաւազն զանազան մեծ պի-
 ծակք, զորեւք արեանարբուք եւ խածառեալ
 100 ծակոտեն զմարմինս մինչ արիւն հոսի: Զի անդ ոչ կայ ծառ, ոչ ճիւղ կամ այլ ինչ որ հովանի լինի, այլ աւազ է: Եւ ի տեղիս տե-
 ղիս հողմոց հնչմանէ զիզացեալ բարձրացեալ է աւազն լեռնանման, որպէս յԱնկուրու կամ
 105 Պէկոպոլարու ճանապարհն. եւ ի բաղմութենէ աւազին ոչ ոտիք, ոչ իշօք, այլ ըզտովք եւ ջորովք զնան. թէ աղքատք բոկ երթան՝ այրի ստք նոցա, թէ փողալով՝ երկու օրն անկցի ոտիցն:
 Եւ ութ օրն հասաք ի ՂԱԹԻՍՅ խասա-
 պան, որ է կէս ճանապարհին Երուսաղէմայ: Եւ անդ մեծ դաճար կայ. իչուն՝ կէս զուռուշ,
 110 ճիւղն՝ մէկ, ըզտուն՝ երկու: Եւ ըխտաւորքն անդ արգիլեցին. որք փարթամք էին՝ փու-
 թով տվին. իսկ աղքատք եւ չքաւորք բաղում գան եւ հարւածս արբին. եւ բոնութեամբ առնուին անօրէն Արպին: Եւ ինձ կ'ասէին թէ Դու վասն է՞ր ձի գնեցիր. ժի—ժի գուռուշ պիտի դաճար տաս. բայց Աստուած ողորմի
 120 Իսրայէլի շախն հողոյն եւ տէր Մարգարէի, զի նօքա ինձ բաղում շահ եւ երախտիք արարին թէ՛ ի Մարը, թէ ի ճանապարհս որպէս հայր կամ եղբայր. քանզի սնց պարոնն իջնուր, սպասաւորքն դային եւ տանէին զիս մօտ չա-
 125 տրըն. երբեմն եւ կերակուր տային. այլ եւ

100 քորեկք: — 101 յարիւն: — 103 յերուսա- ղեմայ: — 107 յզտովք: — 121 մարգարէ:

պարոնն հինգ—վեց օրն կոչէր զիս եւ հարցա-
 նէր թէ ո՞րպէս կ'եսա. եւ երբեմն ջուր ասէր
 տալու. զի նա տասն ուղտ ունէր ջրով՝ տկե-
 130 լով բարձած հինգ—վեց աւուր ճանապարհէ.
 եւ թէ ոք դայր առնուր ձիս, զինուորքն հա-
 սեալ խլէին ի ձեռաց նոցա եւ տային ինձ:
 Անտի հինգ օրն հասաք ի ՂԱԶԱՅ, որ եւ Պօղոս յիշէ ի թուղթն [դատարի]¹⁰ որ է գեղե-
 135 ցիկ խասապայ. զոր ինչ կամիս՝ գտանես անդ,
 եմիշք եւ պտուղք, նուռ, թուզ, սէրկեւիլ, խաղող, զէյթուն, այլ եւ ջուր սառիճնին. զոր սակաւ մի միթիթաբեցաք եւ խմեցաք յադ եւ լի ջուր: Եւ անտի օր ու կէսն եկաք ի ՌԱՄ-
 140 ՂԱՅ սկէլէն. ուստի երկու փոքր մէնդիլ կու-
 մնայ յերուսաղէմ: Եւ Ռամլայ ծովով ալ կ'ել-
 նեն ուխտաւորքն. եւ միտաւող ժողովեալ մնան մինչեւ յերուսաղէմայ առաջնորդէն թարժե-
 մանք գան եւ տանին: Եւ կային անդ մեծա-
 145 մեծ եկեղեցիք վիմաշէն, բայց ամայի. էրէց չկայր. սակաւ հոտով կայր, եւ հինգ—վեց տուն հայի:
 Եւ անտի խաղնան բաժանեցաւ ի մէջը. զնայր շիտակ ի Շամ: Աստուած ազէկ տայ
 150 իւրեանց, որ մեք անահ անդող եկաք. թող զայն որ ամէն զիշեր նօղաթ զարնէին. այլ եւ ամէն բառնայն եւ առնուին ի վար շատիլս կ'առնէին: Եւ այս Ռամլայ ստին մարդագլուխ երկու—երկու զուռուշ ու կէս. մեծ դաճարն
 155 մին ասա է եւ մին Ղաթիայն. այն քիչ քիչ:
 Իսկ շար եւ նեկաթոտ ազգն արապ, որ-
 պէս ի վերայ ծովու ունին որոպայթք եւ հի-
 լա, առաւել ի վերայ ցամաքի, զոր հիացու-
 ցանէ զլսողսն. զի այնպէս խորամանկ են եւ
 160 նեկաւոր, զի չկայ նման նոցա. զոր սակաւ մի ծանուցից ձեղ:
 ՉԱՐՈՒԹԻՆԵՔ ԱՐԱՊԱՅ
 Քարվանն իրիկնով կ'ընէ, որպէս ասա-
 ցաք, զի հովով զնայ. եւ երբ իրիկվէ եւ
 մթնի, քունն նեղէ զմարդիկն որ թմբին եւ
 165 մրաթափին. ոմանք ի վրայ զբաստուց ներհեն
 եւ անկանին ի վայր, այլք իջնուն եւ էտէկ առ-
 նուն գտալարն: Գան պեղծ Արապին ուշիկ ուշիկ, հանեն ի զլսոց զուլարն տալիքն, մինն
 զէնն առնու եւ միւսն զուլարն, քաշ տանի եւ
 170 երթայ սակաւ մի զկնի. ապա թողու ի բաց եւ

134 իչէ: — 141 կենէն: — 149 տա: — 164 զմարդիքն:

¹⁰ Ապահովայէ կ'ուզէր ակնարկել Գործոց Առա- քելոց, Բ. 26. «Հրէշտակ Տեսն խօսեցաւ առ Փիլիպ- պոս եւ ասէ. Արի եւ զնա զու ի կողմն հարաւայ ընդ ճանապարհս որ իջնէ յերուսաղէմէ ի Գազա, զի այս է անապատ»:

զնայ: Եւ իբրեւ սարձանայ այրն, հայի յետս, էշ չկայ, միայն ուլարն յարին: Իսկ այլքն գան խառնին, զի քարվանն մեծ է քանի հա-
 դար հոգի կայ, ո՞վ ըզով ճանաչէ. եւ եկեալ խօսին արպերէն՝ «էշ քալաք սէյտի», այս է.
 175 Պարոն ի՞նչ հայի կաս. եւ նա քնաթաթախ ընդ քունն մրմոսայ, զիտէ թէ ընդ ընկերացն է. եւ նա տեսեալ զնա թմբած՝ առնու զգօ-
 տին զլիսուն եւ փախչի, կամ ձգէ զայրն ի ձիուն եւ ինքն հեծնու եւ փախչի: Իսկ այլքն
 180 զկնի յետ մնալով գան հետ քարվանին. եւ թէ ոք վասն կարեաց կամ այլ իրաց սակաւ մի յետ մնայ, առնուն զէնն եւ զապրանքն եւ փախ-
 չին. զի են որպէս մժղուկք եւ պիծակ, որ յա-
 185 ւաղին ի դուրս գան. ամէն փոս եւ թուփ քա-
 լայտապա բնակութիւն է նոցա. զի անձրեւ չկայ Մարայ երկիրն. եօթն տարին անգամ մի չի գալ:
 Իսկ այլք երթան ուղտոց բեռինս. մինն կաշնու գտնէին. միւսն կտրէ զպարանն
 190 եւ կախ մնայ. այլք առնուն գտնէին եւ փախ-
 չին. եւ սակաւ մի զնացեալ թողու գտանին եւ նա հալածի: Իսկ վերեւի մարդ եւ մին զանկն յերկիր անկանի, անդ է լսել ձայն աղաղակի
 եւ զայց, ճիչ եւ դօթ. սին լայ՝ հակա չկայ, սին թէ էչս. այլն արըղս. կոծին ողբան եւ
 195 ոչինչ օկտին:

ԳԵՐԵՉՄԱՆ ՍԱՄՈՒԷԼ ՄԱՐԳԱՐԵԻ
 Եւ չուեալ անտի մին օրն հասաք ի բարձր լեռն մի եւ քարուտ. զի Ռամլու մինչ յերուսաղէմ ամէն քար է եւ ապառաժ: Եւ այն լեռան ներքեւն զեղ մի կայր արպի. որ եւ
 200 անդ ստին մին—մին ոռուզ: Եւ զլուի լեռանն զերեզման է Սամուէլի մարգարէի. եւ ասին թէ անդ ժողովին Հրեայք ամենայն շարաթի, գառնան ի հարաւ եւ հային եւ զօշեն ասելով. Եկ Մեսիա թագաւոր Իսրայէլի: Եւ անտի
 205 զնացեալ ի բլուր մի, յորմէ Երուսաղէմ քա-
 դաքն երեւէր. զոր տեսեալ Սողոմոնի տա-
 ճարն փառաւոր եւ սուրբ զՅարութեան խու-
 պան՝ ուրախացեալ բերկրեցաք, մինչ զի ի խնդութենէ անտի լացի. եւ առժամայն ան-
 210 կեալ ի վերայ երեսաց լիմոց՝ երկրպաղի սուրբ տնօրինականացն եւ զօհացայ զԱստուծոյ, որ արժանի արար զանարժան ծառայս տեսանլ զսուրբ քաղաքն աստուածակոխ:

(Շարունակելի:) Հրատարակեց Հ. Ն. ԱԿԻՆՅԱՆ

175 արպերէն: — 190 մնա: — 203 հրէայք... շաղաթի: — 208 դարութեան: